

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### «Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2014թվականին կատարված աշխատանքների մասին»

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190337.6 հա, այդ թվում վարելահող՝ 16181.1 հա, բազմամյա տնկարքեր՝ 1379.7 հա, խոտհարքեր՝ 5014.4 հա, արոտ՝ 92325.7 հա, այլ հողատեսքեր 75468.8հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 10 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 14 առաջարկություններ, որից՝ 11-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն. իսկ 4-ը գտնվում են քննարկման փուլում: Համաձայն Հայաստանի կառավարության 30 հուլիսի 1998 թվականի թիվ 479 որոշմամբ սահմանված 3-րդ կետի՝ Աղավնաձորի, Թառաթումբի և Ռինդի համայնքներում կատարվել է հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ:

«Վ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ երեք հողամասերի օտարման առաջարկություններ է ներկայացվել ՀՀՏԿ նախարարություն, որի վերաբերյալ ստացել ենք դրական եզրակացություն:

«Վ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 10 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ համաձայն «Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն ուղշմամբ համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նշանակությունների փոփոխություններ՝ բարձրարժեքից – ցածրարժեքի կամ հակառակը չեն կատարել, օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել

նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 30.5 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 14560000 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2014	11070.68	1383	41426.67	61632.3	148.7

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ



Մ. Մեսրոպյան